

## ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՄԱՄՈՒԼԸ

Հոգեորականութիւն և տգիտութիւն. ահա այն երկու զօրեղ գործօնները, որ սերտ կապերով շղթայուած իրար, կառավարում են ամբողջ Պարսկաստանը. Ահա զրանք են, որ շատ անողոք կերպով հալածում են ամեն մի լուսաւոր միտք, ամեն մի զաղափար, որ կարող է որ և է կերպով պարսիկ ժողովրդի աչքերը բանալի. Ահա դրանով պէտք է բացատրել, որ պարսիկ լրագիրները, մեծ մասով կամ հէնց իրանց սաղմային վիճակի մէջ են մեռնում, կամ լոյս տեսնելուց անմիջապէս յետոյ, և կամ շատ կարծ կեանք են ունենում եւ այդ կարծ ժամանակամիջոցումն էլ անկարող են յեղափոխել կեանքը, նոր հոսանք մտցնել նրա մէջ:

Պարսկաստանում լրագիր, պարբերական հրատարակութիւններ ունենալու փորձեր, ինչպէս անցեալներում, նոյնպէս և ներկայում, արուել և արւում են, բայց միշտ էլ մօլլաների և տգէտ ամբոխի կողմից անաջողութեան է հանդիպել. միշտ էլ հալածուել և այժմ էլ հալածւում է:

Դա ֆակտ է, որ պարսից մէջ պարբերական հրատարակութիւններ և կանոնաւոր դպրոցների ձեռնարկութիւններ եղել են և այժմ էլ կան, և միշտ էլ նախաձեռնողը, սկսողը եղել է ազատամիտ երիտասարդութիւնը, բայց ափսոս, որ այդ երիտասարդները այնքան աննշան թիւ են կազմում թանձր խաւարի մէջ խարիսխող պարսիկ ամբոխի և մօլլաների հետ համատաճ: Մամուլը իր իսկական գերի մէջ մտնելու համար անհրաժեշտ է զիտակցող և հասկացող տարր, իսկ այդ դրութեան համանելու և մասաւոր զարգացում ձեռք բերելու միակ միջոցը կրթական հիմնարկութիւններն են և դպրոցները: Բայց կան արդեօք Պարսկաստանում այդպիսի դպրոցներ—Ոչ: Նոյն հին խավախական դպրոցներն են այժմ, ինչպէս և շատ առաջ. բոլոր դպրոցներն էլ գտնւում են հոգեորականների ձեռքում, աշակերտներին աւանդում են միմիշայն կրօնական առարկաններ: Գիտութիւնների, օտար լեզուների և այլ կարևոր առարկանե-

րի հոտն անդամ չը կայ: Բոլոր դպրոցներումն էլ տիրում են հին, խալիֆայական կարգերը. մեծ, մութ ու նեղ սեննեակ, ուր բազմաթիւ աշակերտներ, մեծ և փոքր, խռոված միասին և չոգած գետնին:

Ճիշտ է, թեհրանում կան մէկ երկու դպրոցներ, որ իրանց տեսակով տարբերում են վերև նկարագրուած խալիֆայական դպրոցներից, ուր կրթութիւնը տարւում է աւելի լուրջ և բազմակողմանի ու մեծ ուշադրութիւն են դարձնում դարձայման վրայ, բայց այդ մի քանի դպրոցները ինչ կարող են անել, նոյն տեսակի դպրոց այս տարի բացուեց և թաւրիդում, չորս հիւ թագաժառանգի լողմանի (բժիշկ), որ սովորել է եւրոպայում, և մի քանի կրթուած պարսիկ երիտասարդների: Այդ դպրոցում աւանդում էին ուսերէն, փրանսերէն, պարսկերէն և արաբերէն լեզուները, թուարանութիւնն, ֆիզիկա և աշխարհագրութիւնն, կողմանեան դպրոցը ունէր և իր գրադարան-ընթերցարանը և հիւանդանոցը: Նա միայն 8 ամիս կանոնաւոր շարունակուեց, բայց այդքան կարճ ժամանակամիջոցում զգալի առաջադիմութիւն նկատուեց. ահա այդ առաջադիմութեան թոյլ ճառագայթները գեռ չորս պատերի միջից գուրս չեկած, հանգան, չնորհիւ տգէտ և մոլեւանդ մօլլաների, որոնք ունեն իրանց հետ և ժողովուրդը: Նրանք յայտարարութիւններ կայնելով պատերին յորդորում են ժողովրդին, որ իրանց տղաներին չուղարկեն «լոգմանեան» դպրոցը, առարկելով, որ այնտեղ սովորեցնում են մոլորեցնող բաներ: Դպրոցը կաղեց, կաղեց, և այժմ հոգեվարքի մէջ է:

Ահա Պարսկաստանի կրթական դործը և ժողովրդի ու հոգեսորականութեան բոնած դիրքը գէպի այդ: Այդպիսի դպրոցական կարգեր ունեցող երկրի մամուլը ինչ պէտք է լինի:

Պարսից առաջին լրագիրը, որքան ինձ յայտնի է հաւաքած տեղեկութիւններից, լոյս է տեսել Սպահանում 70-ական թուականներին դոկ. Միրզա Թաղիխանի (Քաշանցի) եռանդուն ջանքերով:

Եւրոպայում կրթութիւն առած Միրզա Թաղիխանը վերադառնում է Սպահան, ուզում է իր գաղափարները տարածել, լուսաւոր մօքեր արծարծել ժողովրդի մէջ, ժողովրդին ծանօթացնել գիտնական աշխարհի հետ և շեշտել Պարսկաստանի յետամասցութեան վրայ: Բայց ինչպէս, ինչ միջոցներով: Զը կային կանոնաւոր դպրոցներ, չը կային և ուրիշ հասարակական հիմնարկութիւններ: Նա մտածեց լրագիր հրատարակել և անմիջապէս ձեռնարկեց «Ֆարհանգ» գիտական-հասարակական

թերթը «Ֆարհանգը» միայն մի քանի տարի հրատարակուեց, բայց էլի այդքան կարծ ժամանակամիջոցում որոշ արդիւնքներ ցոյց տուեց, զգալի հետքեր թողեց իր ետևից, շատերի թմրած մաքերը շարժեց, որոնք ընդունակ դառան նոր խնդիրների մասին խորհներ, իսկ թէ որքան խոչընդունակի պատահած կը լինի «Ֆարհանգը», շատ պարզ է. կարդացող մասը չառ աննշան թիւ էր կազմում եւ ահա երր մեռաւ՝ այդ թերթը իր ջանքերով տանող դոկ. Միրզա Թաղիբիանը, մեռաւ նրա հետ և իր «Ֆարհանգը»:

«Ֆարհանգը» ճանապարհ հարթեց, նախադուռն եղաւ մի շարք լրագրերի, աւելի լուրջ ու կարեւոր թերթերի, որ հետք-հետէ, իրար ետևից երեսում են պարսից ողորմելի կեանքի մէջ և կազմում են պարսից գրականութեան մէջ մի-մի երեսյթներ:

«Ֆարհանգից» յետոյ, Նասր-Էդդին Շահի ժամանակ, 1880—81 թուականներին, կյթմադ Սալթանէի ջանքերով Թէհրանում լոյս տեսաւ «Իրան» պաշտօնական թերթը, որ մինչև այժմ էլ հրատարակում է: «Իրանի» հրատարակութեան գործում պակաս զեր չէ խաղացել և Նասր-Էդդին Շահը «Իրանը» գրական-հասարակական խնդիրներով այնքան էլ չէ զրադւում, այլ մեծ մասամբ ուշագրութիւն է դարձնում քաղաքական խընդիրների վրայ:

Համարեա նոյն դերն է կատարում և «Իթթիլան» (տեղեկութիւն) շարաթաթերթը, որ այժմ էլ կայ և հրատարակում է էլի կյթմադ Սալթանէի խմբագրութեամբ:

Թաւրիզում, գեռ 1889—90 թուականներին, Նասր-Էդդին Շահը հիմնեց կառավարութեան գլոր և իր անունով կոչուեց «Նասրի»: Այդ հիմնարկութեան մէջ գործում էին թէ ազատամիտ երիտասարդներ և թէ եւրոպացիներ:

«Նասրի» գլորոցում գործող մարդիկ կարիք են զգում և մի լրագրի, Նրանք առանց ձգձգելու, մանաւանդ որ Շահից վայելում էին և ապահովութիւն և ստանում խրախուսանք, ձեռք են զարկում թերթի հրատարակութեան գործին: Այդ աջողւում է նրանց: Թերթը կոչում են «Նասրի», ի պատիւ Շահի Լրագիր և զպրոց միացրած, Նրանք եռանդուն և արիաջան կերպով առաջ են տանում: Կրթութեան աջողութիւնը գպրոցում, լրագրի տարածուելը աւելի լայն շրջաններում, աւելի բազմաթիւ համարներով, իրախուսում և քաջալերում են նրանց իրանց սիրելի գործում: Նրանք շատ լաւ հասկանում էին, որ հոգեորականութիւնն է միակ պատճառը, որ այժմ Պարսկաստանը այս ողորմելի զրութեան մէջ է, որ Պարսկաստանը տնտեսական տագնաղի մէջ է գտնուում և ժողովուրդը խաւարի մէջ է խար-

խափում։ Պէտք է նրա ոյժը և ազդեցութիւնը թուլացնել, նրան այդքան նշանաւոր դեր չը տալի Այդ բոլորի մէջ նրանք հաւատացած էին, բայց միհնոյն ժամանակ վախենում էին ազատ կերպով քարոզել այդ, մերկայնել իրականութիւնը, քանի որ իրանց դէմ կանգնած էր հոգեորականութիւնը, դրա հետ միացան և տգէտ ամբոխը։

Ահա հէնց նոյն ժամանակներում և նման պայմանների մէջ մի խումբ երիտասարդներ թէհրանում հրատարակեցին «Թուղնամէջի Թարիաթ» (կրթական լրագիր) հասարակական-կրթական շաբաթաթերթը, որ աշխատում է կրթութիւն և զարգացում տարածել ժողովրդի մէջ, բայց տալ պարզել այն խոչշոր յետամնացութիւնը, որ ներկայացնում է Պարսկաստանը միւս տէրութիւնների հետ համեմատած։ Նա շեշտում է, որ միայն կրթութիւնը կարող է Պարսկաստանին փրկել, հանել այս թանձր խուարի միջից և գնել առաջադիմութեան և զարգացման ճանապարհի վրայ։ Բայց թէ որքան, ինչ չափով է համառ իր նպատակներին, արդեօք արդիւնքներ ունենում է, ահա կարեոր հարցեր ծիչտ է, նկատում է դրանց հետքը և արդիւնքը, բայց այնքան սննչան, այնքան աղօտ, որ ուշադրութիւն նոյն իսկ չէ գրաւում։

Բայց ինչ—անցաւ էլի մի երկու տարի, հոգեորականութիւնը կատարեց իր սովորական դերը՝ խափանուեց «Նասրի» դրապրոցը, գաղաքեց դրա հետ և «Նասրիէ» թէրթը, միայն 8 տարի գոյութիւն ունենալով։ Իսկ «Թուղնամէջի Թարիաթը» դեռ շարունակում է հրատարակուել չնորհիւ, մեծ մասամբ, Շահի աւելի մօտիկից հակողութեանը։

«Եհտիաջ» (ակնկալութիւն) շաբաթաթերթը աւելի հեռուն գնաց։ Նա աւելի պահանջկոտ էր։ Նա հարուածում էր ամեն մի տգել երեսյի և արարք, կուում էր տիրող հին և վնասակար կարգերի դէմ, սրան նրոն, այս պաշտօնեային, այն կառավարչապետին խիստ քննադատում։ Բայց «Եհտիաջը» դժբախտարար միայն 3—4 ամիս հրատարակուեց, նա խափանուեց դեռ ոչինչ չարած, թէև այդքան կարծ ժամանակում որոշ շրջաններում համակրութիւն էր ձեռք բերել և շատ հետաքրքրութեամբ էր կարդացուում։ Բայց ով եղաւ պատճառը այդ թէրթի գաղաքացման։ Թաւրիզի նախկին կառավարչապետ Ամիր-Նիզամը, որ յայտնի է եղել որպէս կեղեկող և հարստահարուղ ուշադրութիւն չէ գաղաքել ժողովրդի կարիքների վրայ, անհող է եղել դէպի իր պաշտօնը։ Ահա այդ պակաս կողմերը խիստ կերպով քննադատել է «Եհտիաջ» շաբաթաթերթը։ «Եհտիաջի» բնած այդ դիրքը բնականարար կատաղեցնում է կառավարչապետին, որ

ոչ թէ միայն դադարեցնում է թերթը, այլ և խիստ թակել ու ծեծել է տալիս խմբագրին: Բայց ում բողոքի պարսիկ խմբագրը, ով է նրա ասածին լսողը, միթէ կառավարչապետին կը թողնեն և կանցնեն աղքատ ու իր դիրքով ոչնչութիւն ներկայացնող մի օր և է խմբագրի կողմը...

Թաւրիզում էլ մի-մի խումբ երիտասարդների ջանքերով 1897 թուին լոյս տեսաւ «Հաղիք» շարաթաթերթը, բայց մի-միայն 4—5 համար. նա խափանուեց, ինչպէս իր նախորդները:

Բացի վերև առաջ բերուած լրագրերից, որ ընդհանրապէս հասարակական-քաղաքական բնաւորութիւն էին կրում, կան թերթեր թէ Թաւրիզում և թէ Թեհրանում, որոնք մի տեսակ ընտանեկան բնաւորութիւն են կրում, օրինակ, «Քղար» (քաղաքավարութիւն), «Քեամալ» (հասկացողութիւն) և այլն:

«Քղարը», ինչպէս անունն էլ բնորոշում է, միայն քաղաքավարական ձեեր է սովորեցնում, թէ ինչպէս պիտի ընդունել մեծին, ինչպէս վերաբերուել օտարին և այլն: Խակ «Քեամալը» զուտ բանաստեղծական թերթ է, բայց շատ ողորմելի և խղճալի բան է ներկայացնում իր ոտանաւորներով և զրոգներով, իրանց ոտանաւորների մէջ սրան նրան, իր հօրը, պապին են գովում, շատ միայն սէր են երգում «Քեամալի» մէջ բոլոր գրողներն էլ միրզաներ են (գրագիր):

Զափազանցութիւն չէ, եթէ ասենք, որ չէք գտնի մի զրագէտ պարսիկ, որ գոնէ մի ոտանաւոր զրած չը լինի: Հեղինակաւոր բանաստեղծները չեն մասնակցում այդպիսի ամսագրերի, սրանց զրուածքները առանձին զրբերով են հրատարակուում:

Ինչպէս ընթերցողը տեսնում է, վերև լիշուած լրագրերը մեծ մասամբ շարաթաթերթեր են եղել. և դա շատ հասկանալի է: Միթէ այդ պայմանների մէջ հնարաւոր է օրագիր ունենալ և պահպանել նրա գոյութիւնը. մամուլ չկայ, աշխատակցող քիչ և այլն: Միակ օրագիրը «Խուլասաթլ-հաւատես» (պատահած գէպքերի համառօտութիւն), որ հրատարակուում է Թեհրանում և այժմ էլ գոյութիւն ունի: Դրա թէ հրատարակութիւնը կանոնաւոր չէ տարւում և թէ մի առանձին ացքի ընկնող դեր չի խաղում, նա միայն արձանագրում է պատահած գէպքերը:

Բացի այդ Թեհրանում հրատարակուում են նաև երկու պատկերազարդ ամսագրեր,—«Բուզնամիի շարաֆ», «Բուզնամիի շարաֆ քաթ», որոնք նշանաւոր և հեղինակաւոր մարդկանց, — թէ զրագէտ և թէ քաղաքագէտ, մեծ մասամբ վերջիններից, — նկարներ են տալիս համառօտ կենսագրականներով: Այդ ամսագրերը մեծ համակրութիւն են ձեռք բերել և բաւականին

տարածուած են թէ հասարակ ժողովրդի մէջ և թէ նոյն իսկ հոգևորականների մէջ։ Այս տարի երկու ամսագրերի էլ երկք տարին լրացաւ։

Մի ուրիշ լրագիր, որ ուշադրութեան արժանի երեսյթ է ներկայացնում Պարսկաստանում, դա «Թալահարլ-Մոզաֆարիյ» թերթն է, որ այս տարուանից է հրատարակւում։ «Թալահաթլ-Մոզաֆարիյ» թերթը երկրագործական լրագիր է, որ հրատարակում են մի խումբ մասնագէտ փրանսիացիներ, ուստաներ և պարսիկներ։

Մեր այս թռուցիկ տեսութիւնից պարզ երեսում է որ պարսիկ երիտասարդների մէջ էլ կայ եռանդ, գործելու ցանկութիւն, նաև էլ ընդունակ է մոտաւոր կեանքով զբաղուելու, նրա մէջ էլ կան առաջադիմելու նշաներ։ Բայց զրա դէմ կանգնած է հոգևորականութիւնը, իր հնու և մոլեռանդ, տգէտ ժողովուրդը։ Ահա թէ ինչու մամուլը, լրագրական խօսքը չի կարողանում իր իսկական գերի մէջ մտնել և շատ շուտով խափանւում է, երբեմն էլ դադարում է, որովհետեւ կարդացող չունի։

Մի քանի խօսք էլ արտասահմաննեան պարսից մամուլի մասին և ապա անցնենք զանազան հրատարակութիւնների հարցին։

Արտասահմաննեան մամուլը աւելի խիստ լեզու է բանեցնում և վերանորոգչական բնաւորութիւն է կրում։ Գտնուեցին մի քանի պարսիկ երիտասարդներ, որոնք ազատ չը կարողանալով իրանց միտքը յայտնել Պարսկաստանում, ձեռնարկեցին Եղիպատում և Հնդկաստանում մի քանի թերթների հրատարակութեան, ինչպէս «Ռուդնամիի Փարուարիչի», «Սուրէլիա» (Եղիպատու), «Համբուլ-Մութին» (Հնդկաստանում)։ Դրանք միշտ հարուածում են հին կարգերը, հարուածում մեծ պաշտօնական մարդկանց, նոյն իսկ յարձակւում են կառավարութեան վրայ որպա համար, որ միանդամայն աչքաթող է արած կրթական անհրաժեշտ գործը։ Նա քարոզում է նոր հոսանք մտցնել, ինտելիգենտ դաս կազմել, որ մաքառի անպէսք կարգերի և օրէնքների դէմ, բարենորոգումների ձեռք զարկել և այլն։ Այդ լրագրերի ազատ մուտքը Պարսկաստանում երբեմն արգելում, երբեմն էլ թոյլատրում է։ Այժմ զրանց մուտքը արգելուած է։

Դպրոցից և մամուլից զատ զարգացման գործում որոշ գեր են խալում և զանազան հրատարակութիւնները, ինքնուրոյն և թարգմանական զրական աշխատութիւնները։ Ինքնուրոյն գրուածքներից ամենից շատ կարդացում և տարածուած են Սաղիի և Հաֆիսի բանաստեղծութիւնները։ Այդ երկուսից

պակաս տեղ չէ բռնում և համակրութիւն վայելում նաև Օմա-  
րա-Խայամ, որի բանաստեղծութիւնները միայն վերջին տարի-  
ներս հրատարակեցին մի քանի եւրոպացիներ։ Արան ունակը մի  
քանի կողմերով աւելի բարձր են դասում, քան առաջին եր-  
կուսին։ Խնդնուրոյն գրականութեան մէջ կան և վէպեր, անեկ-  
տօսներ, իսկ ամենից շատ կրօնական գրուածքներ։ Թարգմա-  
նական գրուածքներից ամենից տարածուածը Ռոբինզոնն է, որ  
ձեռքէ ձեռք խլում, կարդում է նոյնիսկ հասարակ յողովուրդը։  
Տարածուած են նաև Սենեֆար թուանզի (երեք զինակիր) և  
Մօնտեգրիստոի գրուածքների թարգմանութիւնները, և այլ վի-  
պական, փոքր մասով և զիտնական գրուածքներ, մանաւանդ  
անեկտօսներ։

ԵՐ. ՖՐԱՆԳԵԱՆՑ